ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/09»

ք. Երևան

«22» հուլիսի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խաչիկ Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նարեկ Աղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 880 000 (ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ընդ որում՝

1-ին չափաբաժնի համար՝ 510 000 (հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժնի համար՝ 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժնի համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[21] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	*«ԷՅԶ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան Արցախի 15 տուն
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 04230785
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 2052822069731001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան	Տնօրեն՝ Ն. Աղազարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«22» հուլիսի 2021թ. կնքված
ԴԴ-ԳՀԾՁԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Մատուցվող ծառայության առավելագույն միավորի գին	ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար	ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գին	Կնքվելիք պայմանագրի ընդհանուր /առավելագույն/ գինը	չափման միավորը	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50711100/1	1.Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման – պահպանման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 1-ի		882 000	882 000	510 000	դրամ	1	ք. Երևան՝ Կորյունի 15/1, 17, Վ. Սարգսյան 5, Թբիլիսյան խճ. 3/9, Մ.Խորենացու 162 ա, Տիգրան Մեծի 23/1, Նազարբեկյան թ. 40, Գյուլիքեխվյան 20, Հ.Ներսիսյան 10, Արշակունյաց պ. 24/1	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություններ ի կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 1-ը:
2	50711100/2	2.Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման – պահպանման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 1-ի		882 000	882 000	170 000	դրամ	1	Կոտայքի և Արագածոտնի մարզեր՝ ք. Աշտարակ Էջմիածնի խճ. 65, ք. Ապարան Գայի 11, ք. Թալին Խանջյան 13 , ք. Հրազդան, Միկրոշրջան 13 փողոց 1/1, ք. Աբովյան, Կոտայքի 8, ք. Չարենցավան Երիտասարդական փող. 2/1, ք. Եղվարդ Չարենցի 29	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականություններ ի կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 1-ը:

4	50711100/4	4.Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման – պահպանման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 1-ի	882 000	882 000	200 000	դրամ	1	**Արարատի, Վայոց ձորի և Արմավիրի մարզեր՝** ք. Արտաշատ Շահումյան 19, ք. Վեդի Թումանյան 1, ք. Մասիս Հերացի 26/31, ք. Վայք Ջերմուկի խճ. 8, ք.Եղեգնաձոր Միկոյան 23, ք. Էջմիածին Կամոյի 15, ք. Արմավիր, Հանրապետության 41	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու 20-րդ օրվանից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 1-ը:

1. *Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնք պետք է լինեն չօգտագործված և որոնց համար պետք է տրվի առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետ:*
2. *Այն դեպքում, երբ նշված հասցեներում հնարավոր չէ պատշաճ կերպով իրականացնել ապասարքումը, Պատվիրատուի համաձայնությամբ վերանորոգման ենթակա սարքը կարող է տեղափոխվել Կատարողի արհեստանոց:*
3. *Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի կողմից համապատասխան հայտ ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում առանց մասերի փոխարինման ծառայությունների դեպքում, երկու աշխատանքային օրվա ընթացքում մասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող մասերը տվյալ պահին առկա չեն՝ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:*
4. *Յուրաքանչյուր սարքի ապասարքման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և Պատվիրատուին է ներկայացվում նախնական գնման և գնահատման ակտ:*
5. *Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:*

Ցանկ 1		
Օդորակիչների՝ վերանորոգման և պահպանման ծառայությունների անվանումները, այդ թվում՝	առավելագույն միավոր գները (<< դրամ)	Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (<< դրամ)
1. դիագնոստիկա/ պրոֆիլակտիկա	8000	882 000
2. R22 գազով լիցքավորում (9000BTU)	7000	
3. R22 գազով լիցքավորում (12000BTU)	8500	
4. R22 գազով լիցքավորում (18000BTU)	10000	
5. R22 գազով լիցքավորում (24000BTU)	11500	
6. R410 գազով լիցքավորում (9000BTU)	8000	
7. R410 գազով լիցքավորում (12000BTU)	10000	
8. R410 գազով լիցքավորում (18000BTU)	13000	
9. R410 գազով լիցքավորում (24000BTU)	16000	
10. ներքին բլոկի ռադիատորի մաքրում	8000	
11. արտաքին բլոկի ռադիատորի լվացում	5000	
12. ներքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (9000BTU)	6000	
13. ներքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (12000BTU)	8000	
14. ներքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (18000BTU)	11000	
15. ներքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (24000BTU)	13000	
16. արտաքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (9000BTU)	9000	
17. արտաքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (12000BTU)	11000	
18. արտաքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (18000BTU)	13000	
19. արտաքին բլոկի օդամղիչի փոխարինում՝ ներառյալ օդամղիչը (24000BTU)	15000	
20. էլեկտրամագնիսական թողարկիչի փոխարինում՝ ներառյալ թողարկիչը 25Ա	8000	
21. էլեկտրական կուտակիչի փոխարինում՝ ներառյալ կուտակիչը	5000	
22. ինվեռտորային պլատայի նորոգում	35000	
23. կառավարման պլատայի փոխարինում՝ ներառյալ պլատան (9000BTU)	19000	
24. կառավարման պլատայի փոխարինում՝ ներառյալ պլատան (12000BTU)	20000	
25. կառավարման պլատայի փոխարինում՝ ներառյալ պլատան (18000BTU)	21000	
26. կառավարման պլատայի փոխարինում՝ ներառյալ պլատան (24000BTU)	22000	
27. կառավարման պլատայի վերանորոգում	7000	
28. կառավարման վահանակի փոխարինում նորով	6000	
29. կոմպրեսորի փոխարինում՝ ներառյալ կոմպրեսորը (9000 BTU)	50000	
30. կոմպրեսորի փոխարինում՝ ներառյալ կոմպրեսորը (12000 BTU)	65000	
31. կոմպրեսորի փոխարինում՝ ներառյալ կոմպրեսորը (18000 BTU)	80000	
32. կոմպրեսորի փոխարինում՝ ներառյալ կոմպրեսորը (24000 BTU)	100000	
33. օդորակիչի ապամոնտաժում	5000	
34. օդորակիչի տեղադրում	15000	

35. պղնձե խողովակի փոխարինում նորով 1մ	3000	
36. օդորակիչի հովացման համակարգի շարժիչի փոխարինում՝ ներառյալ շարժիչը	60000	
37. ֆեն շարժիչի փոխարինում՝ ներառյալ ֆեն շարժիչը (9000BTU)	13000	
38. ֆեն շարժիչի փոխարինում՝ ներառյալ ֆեն շարժիչը (12000BTU)	15000	
39. ֆեն շարժիչի փոխարինում՝ ներառյալ ֆեն շարժիչը (18000BTU)	17000	
40. ֆեն շարժիչի փոխարինում՝ ներառյալ ֆեն շարժիչը (24000BTU)	19000	
41. զոդման աշխատանքներ	5000	
42. ժայլուզի փոխարինում՝ ներառյալ ժայլուզը (1 ժայլուզ)	5000	
43. ժայլուզի շարժիչի փոխարինում՝ ներառյալ շարժիչը(1 շարժիչ)	10000	
44. ռևերս փականի փոխարինում՝ ներառյալ փականը (9000BTU)	18000	
45. ռևերս փականի փոխարինում՝ ներառյալ փականը (12000BTU)	18000	
46. ռևերս փականի փոխարինում՝ ներառյալ փականը (18000BTU)	20000	
47. ռևերս փականի փոխարինում՝ ներառյալ փականը (24000BTU)	20000	
48. ավտոաշտարակ 1 ժամ (մինչև 5-րդ հարկ)	10000	

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Ղեկավարի պաշտոնակատար՝ Խ. Ղազարյան

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան
Արցախի 15 տուն
ՀՎՀՀ՝ 04230785
Հ/Հ՝ 2052822069731001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Աղազարյան

(ստորագրություն)

Հավելված N 2
«22» հուլիսի 2021թ. կնքված
ԴՌ-ԳՀՄԶԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50711100/1, 50711100/2, 50711100/4	Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի (օդորակիչների) վերանորոգման – պահպանման ծառայություններ	528 000	528 000	528 000	880 000	880 000	880 000	880 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին"*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավարի պաշտոնակատար՝ Հ. Ղազարյան

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«ԷՅՉ ՎԻ ԷՅ ՄԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան Արցախի 15 տուն
ՀՎՀՀ՝ 04230785
Հ/Հ՝ 2052822069731001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Աղազարյան

(ստորագրություն)

Հավելված 3
« » 2021թ. կնքված
ԴԴ-ԳՀՇՁԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2021թ. կնքված
ԴԴ-ԳՀՄՁԲ-21/09 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն